

Չամչեաններու, Բնճիճեաններու եւ Աւ-
զերեաններու ողբով լեցուն էր Ս. Ղա-
զար. եւ Պայրըն սիրեց այդ միջավայրը,
որ հայկական տաքուկ բոյն մըն էր՝ ա-
մէն տեսակէտով:

Լորտ Պայրընէն ետք շատեր անցան Ս.
Ղազարէն. զիտնականներ, լիտնադու-
ներ, զեղարուեստագէտներ, ամէնազգի-
եկան ու անցան այս փոքրիկ կղզիէն. ե-
կան ու կու գան՝ տարին տասնեակ հա-
զարաւոր այցելուներ՝ ճանչնալու եւ սի-
րելու Հայաստանը, աստուածաշնչական
մեր դրախտավայրը եւ ստեղծագործ հայ
ժողովուրդը:

Վերականգնող աշխատանք մը եւս:
Ս. Ղազար գլխով հազարաւոր օտար ըզ-
բօնաշրջիկներուն, որ ունէր ամառային
արձակուրդներուն կ'անցնէին Վենետիկէն,
Միլիթարեան միարանները՝ հայութեան
եւ հայ արժէքներու մասին լայն տեղե-
կութիւններ կու տան, համբերատար
բացատրութեամբ ցուցադրելով հայկա-
կան ձեռագիրներ, կոնգալներ, արծա-
թեղէններ, յախճապակիներ, հիւսուա-
ծեղէններ, նկարներ, հրատարակութիւն-
ներ: Ամերիկացի, անգլիացի, գերման,
Փրանսացի կամ չուեցացի... այցելու-
ներու հոգիներուն մէջ, մէկուկէս ժամ-
ուան ընթացքին, Հայաստանն ամբողջ կը
կառուցուի, իր փառքերով հնամեայ, իր
յաղթանակներով այժմեայ, իր Սփիւռ-
քով ու Նահատակներով: Ծառեր, որոնք
Ֆրանց Վերֆելի վէպէն միայն կը ճանչ-
նային մեզ, կամ Սարոյեանի մէկ պատ-
մուածքէն ու իմաշատուրեանի մէկ պա-
րանուագէն, կամ ալ... բնաւ չէին ճանչ-
նար, Արարատի նման հսկայ գաղափար
կազմած հայութեան մասին, հայ պատ-
մութեան ու զեղարուեստի մասին, յու-
զումով կը բաժնուին Ս. Ղազարի նաւա-
մատոյցէն:

Կու գան հազարներով նաեւ Հայեր.
շատեր, որոնք հնարաւորութիւն չունին
Հայրենիք այցելելու, Ս. Ղազարի մէջ կը

դտնեն կտոր մը Հայաստան, հոս՝ կարօ-
տը կ'առնեն իրենց հայրենի հողին ու
ջուրին, քանդուած սրբութիւններուն, եւ
արցունքով՝ կտոր մը հող կը փրցնեն այս
փոքրիկ Հայաստանէն, ու կը վերադառ-
նան՝ հայութեան հողիով վերակենդա-
նացած:

Կու գան նաեւ Հայաստանէն, Ս. Ղա-
զարի մէջ փնտռելու Վանի լճակը գեղա-
ծիծաղ, Նարեկի հողիէն ինկած կայծը
լուսավառ:

Եկաւ նաեւ Վեհափառ Վազգէն Ա. Ա-
մենայն Հայոց Կաթողիկոսը. եկաւ, ըզ-
գաց ու վկայեց թէ «կենդանի է այստեղ
վեհութիւնը լուսաւնակ մեծն Միլիթարի
տեսիլքին», վկայեց թէ «կենդանի է այս-
տեղ երանելի Ալիշանի Հայաստանեայց
Վեհափառ Ողբին» (Ոսկեմատեան այցե-
լուներու Ս. Ղազարի, 1956, Մարտ 26):

Եկաւ նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Գա-
հակալ՝ Վեհափառ Խորէն Ա. Կաթողի-
կոսը, ու զբաւոր թողուց՝ թէ «Ս. Ղա-
զարու Մայրավանքը պերճաւոր վկայու-
թիւն մըն է այն լուսատենչ հողին՝ որ
Հայուն անխորտակելի ոյժն է եղած դա-
րերու ընթացքին», վկայեց՝ թէ «Միլի-
թար Արքահայր այդ լուսատենչ հողիէն
կայծ մը բերաւ այս Մենաստանին մէջ -
Աստուծոյ, Մեսրոպեան լեզուին եւ Հայ
Մշակոյթին սուրբ կայծը» (Ոսկեմատեան
այցելուներու Ս. Ղազարի, 1967, Մայիս
25):

Հարցուցած էք երբեք թէ ինչո՞ւ անդ-
լիացի նշանաւոր բանաստեղծ Լորտ Պայ-
րըն սիրեց Հայ աղբը:

Հարցուցած էք երբեք թէ ինչո՞ւ Ամե-
նայն Հայոց Կաթողիկոս Վեհափառ Վազ-
գէն Ա. կը պաշտէ Հ. Ալիշանը:

Հարցուցած էք երբեք թէ ինչո՞ւ Մե-
ծի Տանն Կիլիկիոյ Գահակալ Վեհ. Խո-
րէն Ա. Կաթողիկոս այցելեց Ս. Ղազար:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

ԴԱՆԻԷԼ ՎՐԴ.Ի ԱՍՈՐԻՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՅ ԴԱԻԹԻ

(Շար. տե'ս «Բազմավէպ» 1967, ք. 6-8, էջ 125)

Զ.

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԴԱՆԻԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱ-
ՆԱԿԻՆ, ՈՃԻՆ. ԵՒ ԹԷ ԻՐՕՔ ՄԻԱԲՆԱԿ
ԿԱՄ ՅԱԿՈԲԻԿԵԱՆ ԷՐ

Եթէ աւելի լոյսի կը կարօտի Յովհան-
նէս Վարդապետի մասին ունեցած մեր
տարտամ ծանօթութիւնը, սակայն մեկ-
նութեանս հեղինակ Դանիէլ՝ ասորի մա-
տենագրութեան մէջ կը յիշուի իբր մեկ-
նիչ Սաղմոսներու, իր Սալէհէ՝ ծննդա-
վայրով կամ բնակավայրով, Աբբայ կամ
Վարդապետ կամ Եպիսկոպոս տիտղոսնե-
րով, որ 650ի շուրջ ապրած է, սրբու-
թեան եւ գիտնականի համբաւով. ասոր
ապացոյցն է Սաղմոսներու ընդարձակ
մեկնութիւնս:

Կը յիշէ նաեւ Աստեմանի, թէ Եղեսիոյ
Յակոբ Եպիսկոպոսը († 708ին), նամակ
մը գրած ըլլայ առ Դանիէլ, նկատմամբ
Թեկուացի կնոջ, այն որ Դաւիթ թագա-
ւորի դուքը շարժեց՝ Արիստոմ որդւոյն
համար²: Իրեն ժամանակակից էր նաեւ
Եփրատի արար ցեղերուն Գէորգ Եպիս-
կոպոսը († 724):

Մեկնութեանս հայերէն թարգմանու-
թեան մէջ ալ, երբ ԶԳ. սաղմոսը կը մեկ-
նէ (էջ 503), կը կարդանք հետեւեալը.
«յարեան յետոյ եւ նետորականք, եւ
խորհեցան չարիս յամի երեսներորդի
Թէոդոսի մինչ ցայս ամս՝ որ է ութ հա-

րիւր եւ յիսուն եւ երեք»: Հ. Ալիշան՝
Դանիէլի մեկնութեանս ժամանակը կը
դնէ Զ. դարու կիսուն, իր զրջով աւելցը-
նելով հետեւեալ ծանօթութիւնը. «Զեռա-
դրին 327րդ էջին մէջ յիշուած 853 թուա-
կանը անշուշտ Սելեւկիացիներու թուա-
կանն է, որոնք փրկչականէն 313 տարի
առաջ կը սկսին»:

Նաեւ բենեդիկտեան Cl. Van Puyvelde,
Ս. Գրքի ասորական թարգմանութիւննե-
րու մասին խօսելէ ետք, կ'անցնի անոնց
ձեռագիրներուն, եւ հուսկ՝ ասորի մա-
տենագիրներու քով եղած Ս. Գրքի մէջ-
բերումները կամ վկայութիւնները կը յի-
շէ, ուր Դանիէլ Սալէհեցիի մասին հե-
տեւեալը. «Վեցերորդ դարու կիսուն դա-
նադան մեկնութիւնները գրած է, որոնց
մէկ մասը կորսուած է. քանի մը ճառեր
միայն՝ Սաղմոսներու վրայ՝ տպուած են,
զերմանէն թարգմանութեամբ³:

S. Ortiz De Urbina եւս Դանիէլ Սալե-
հեցիի մասին կ'ըսէ. «Երեք հատորներով
կը մեկնէ Սաղմոսները, 541-2 տարիներ
ուն. ասոնց վրայ կարելի է աւելցնել
ժողովողի զրքին մեկնութիւնը, եւ գրու-
թիւն մը Եպիսկոպոսի անապատներու (pla-

1. Սալ կամ Սալէհ՝ Մաւրիտանիոյ (Մարոք) Ֆէս
գաւառի մէջ, Ատլանտեանի ափունքը. Սալէհի
գիմաց է նոր Սալէ կամ Ռապադ. Ալիշան,
Քղբ. Աշխ. էջ 478:

2. Assemani B. O. հտ. Ա. էջ 487 եւ 495:

3. Հմմտ. Dict. de la Bible. Supplément Fasc.
33, էջ 850:

gas) վրայ: Մասնական տպագրություններ են Ա. Ե. Բ. ճառերը⁴:

Համեմատելով Դանիելի մեկնությունը՝ մեր Ներսէս Լամբրոնացիի Սաղմոսներու մեկնության հետ, կը տեսնենք որ Դանիել շատ անգամ նվիրել է խոստովանելու աղանդականություններու, երբեմն ալ տեղական սովորություններ յիշատակելով, որով ընթերցողը կը գիտարարէր ամփոփել անոր զիտողությունները եւ հետեւի հեղինակին նպատակին: Սեղմ եւ կարող են Լամբրոնացիին իմաստները, զօրաւոր չեղան եւ ձգիչ ունեն համար՝ ախորժով եւ դիւրաւ կ'ըմբռնուին քիչ խօսքերով յայտնած գաղափարները, եւ սիրով կարելի կ'ըլլայ իւրացնել սկզբունքները: Սա գարգացած միաբաններու կ'ուղղէ հոգեւորական կեանքի խորութիւնները եւ բարձրութիւնները. իսկ Դանիել՝ փորձառու աղետ մը, չուրջ տեսած մարդկային ամէն տեսակ տկարութիւնները դարձանել կը ճշնի, յորդորներով եւ օրինակ տալով Դանիել մարգարէին հեղութիւնը, անյիշատակութիւնը եւ ապաշխարութեան հոգին: Հեղեղ մ'է Լամբրոնացիին, անարգել կը թափէ ինչ որ կուտակուած ունի մտքին ու սրտին մէջ. Դանիել հեղատաճ հեղեղատ՝ վազող առուակ մ'է. կը ջանայ ամէն ինչ քննել, մինչեւ իսկ խիճերը, աննշան պարագաները. եւ կը շեղի աննշան նմանութիւններ գտնելով՝ նոյն իսկ բառերու ներքեւ (հմտ. ճառ 55րդ, էջ 307 Արիստոտելի, եւ էջ 309 աղանդի նմանութիւններ) եւն.: Բեմի վրայ բարձրացած քարոզիչ է Դանիել, մանաւանդ ճառերուն սկզբնաւորութեան (հմտ. 58րդ ճառը), մինչեւ որ Սաղմոսին մեկնութեան թելը ձեռք ձգէ եւ սկսի հիւսել: Ասորի ծագման ու գարգացման հետեւում է արդեօք, թէ անձնական խառնուածքին: Նոյն 58րդ ճառին մէջ՝ հրեշտակներու անկումին պատճառը եւ մեկնութիւնը՝ իր դարուն տեսութեան վերագրելի է, տարտամ եւ քողարկեալ. մինչ օճին եւ քարք ի թին խայթումը մանր հետազոտած է: Նոյն-

քան մանրակրկիտ կը քննէ վէմ բառը, ստէպ զործածուած Բրիտոսի համար՝ Ս. Գրքին մէջ, սկսեալ Յակոբ Նահապետէն եւ մարգարէական գրութիւններէն (սկիզբն ԿԱ. Սաղմոսի):

Դանիել մեկնելու իր յատուկ ոճն ունի. սաղմոսին մէկ համարը կամ երբեմն կէսը բացատրելու համար՝ կը քննէ նախ պատճառը թէ ինչու'ւ ըսուած է, ապա կու տայ պատասխանը Ս. Գրքի օրինակով մը՝ պատմական, աշխարհական, կամ նոյն համարի մէկ բառին մէջ փրկութիւն մը. օրինակի համար ՀԳ. սաղմոսին «Աստուծոյն եղերութիւն»:

Ընդարձակ իր մեկնութեան մէջ էի յիշեր ուրիշ մեկնիչ. կ'ակնարկէ մարգարէները եւ առաքեալները: Իր զխառն նկարագրէն է Պօղոս առաքեալ՝ զոր «ամէնիմաստ» կ'անուանէ ստէպ: Հին Կտակարանէն պատմական եւ մարգարէական վկայութիւններով կը պարզէ Սաղմոսներուն գիտարարին անցքերը, գանազան մասերէն համեմատութեան կէտեր գտնելով անոնց: Ունի մէկ քանի հատածներ Գրիգոր աստուածաբանէ, եւ առանց անուն յիշելու, կ'ըսէ. «Հասու եղաք յայլոց պատմութեան» (ճառ 20րդ):

Դանիել Վարդապետ՝ միաբնակ, Յակոբիկեան կոչուած է, եւ ի Յիսուս մի բնութիւն գաւառող. ստուգիւ, մեկնութեանը մէջ կան արտայայտութիւններ, որոնք աւելի իր ժամանակի եւ մանաւանդ իր աղղի աստուածաբանական հարցերուն արձագանգ են, եւ հետեւանք՝ անձն եւ բնութիւն բառերուն ստույգ նշանակութեան անորոշ եւ տարտամ ըմբռնողութեան: Այս կէտը որքան ալ իր մեկնութեան մէջ մէկ քանի անգամ կը տեսնուի, սակայն անոնց հակառակ՝ հակասական բացատրութիւնները կարելի չէ ուրիշ կերպով ըմբռնել եւ արդարացնել, վասն զի ըստ ստէպ Բրիտոսի կատարեալ աստուածա-

4. G. Diettrich 1912 զերմ. թարգմանութեամբ: - L. Lazaris, Հատակոտորք - Նախարան եւ ճառ 83րդ եւ 150րդ: - J. E. Rahmani Ասոր. Պատմ. թրգմ.:

յին եւ կատարեալ մարդկային բնութիւնները՝ մեկնութեանը մէջ պարզած է, Նեստորականներու եւ Արիստականներու դէմ: Մեկնելով «Արդ զու մարդ՝ հաւասար իմ, բարեկամ իմ եւ ծանօթ» (Սղմ. ԾԵ), կը գրէ. «Ահաւասիկ մարդարէն խոստովանի եթէ Աստուած՝ հաւասար մեր եղեւ մարդ, եւ ոչ կարծեօք ինչ կամ փոփոխմամբ, այլ եղբայրութիւն ստացաւ ընդ մեզ, որ ի վեր է բնութեամբ քան դամեանայն» (էջ 311): Դարձեալ «վասն զի քաղցեաւ, պատճառ առին նոր հրեայք՝ աշակերտք Նեստորի եւ ասեն, եթէ որ քաղցեաւն՝ ոչ էր Աստուած, այլ մարդ սոսկ կցորդ նորին. եւ այս խորհուրդը՝ նախատինք եւ անարգանք են Աստուծոյ» (Սղմ. ԿԹ. էջ 410): Յայտնի է Դանիել Վարդապետի միտքը, երբ կը յիշէ Արիստը, Նեստորը. իր մոլորեալներ, որոնց աղանդը գաղափարուած է Ս. Կիւրեղ Ալեքսանդրացիի «միացեալ բնութեամբ ի յերկուց» բացատրութեամբ. վասն զի Նեստոր ի Բրիտոս բարոյական միայն միաւորութիւն կը գնէր, մինչ Կիւրեղ ոչ բարոյապէս՝ այլ բնութեամբ, այսինքն՝ իսկապէս, ճշմարտապէս, անձնաւորապէս, ըստ իր Պարապման Գրքին, եւ առ Նեստոր թուղթին:

Դանիել՝ Սաղմոսներու մեկնութեանը մէջ առիթը կը գտնէ Մանիքեցիներու եւ Երեւութականներու դէմ ալ մաքառելու, երբ կը բացատրէ «Հայր իմ մեծ է քան զիս» խօսքը, Ը. Սաղմոսին հետեւեալ անցքով. «Արդ թերեւ մեզի դէմ պիտի առարկեն հերետիկոսները, թէ որովհետեւ Հայր՝ Որդւոյն տուաւ իշխանութիւնը, ուրեմն անկէ մեծ է, վասն զի ըստ կարգի՝ մեծ է տուողը քան առնողը. ուրուն կը պատասխանենք, թէ պէտք չէ հասկնալ աշխարհի մեծութեան համաձայն տուողներուն եւ առնողներուն Ս. Գրոց խօսքը՝ Հօր եւ Որդւոյ վրայ: Նաեւ եթէ մէկը լաւ քննելու ըլլայ, ոչ թէ տուողին մեծութիւնը կամ առնողին կրտսերութիւնը կը նշանակէ, այլ բնութեան»: Օրինակներով ալ կը ջանայ հաստատել, ըսելով, թէ ինչպէս մեր մէջ թաղաւորնե-

րը՝ որ իշխանութիւններ կը բաշխեն, եւ հպատակները՝ որ անոնցմէ կ'ընդունին, հաւասար են բնութեամբ, կամ ինչպէս աղքատ Ղազար նոյն բնութիւնն ունէր, ինչ որ հարստութեան մէջ խրախճանող մեծատունը, այսպէս ալ Հօր տալը եւ Որդւոյն առնելը՝ ոչ թէ բնութեամբ աւելի փոքր ըլլալը կը նշանակէ: Ու կը գրիմէ ծառերուն՝ որ իրենց պտուղները կուտան. եւ այս՝ ոչ թէ ծառին մեծութիւնը կամ պտուղին կրտսերութիւնը կը յայտնէ, այլ ընդհակառակն՝ բնութեան միութիւնը... (էջ 46):

Մեկնելով դարձեալ ԻԲ Սաղմոսին «Ծալեցին զձեռս իմ եւ զոտս իմ, եւ աղաղակէին ամենայն ոսկերք իմ» համարը, կը գրէ. «Լռեսցեն այժմ աշակերտք ամբարշտ Մանիքեցոցն, որք կարծեալք իմն ասեն զգեղուն զմարմինն Փրկչին. զի եթէ ոչ չարչարէր մարմին նորա, զիս'րդ աղաղակէին ամենայն ոսկերք նորա. եւ եթէ չարչարէր, յայտ է եթէ ստուգապէս մարմին է զգեղեալ եւ ոչ առ աշաւք... (էջ 122): Իսկ երբ ԾԱ. սաղմոսին «Անօրէնութեամբ յղացաւ եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ» համարը կը մեկնէ, կը գրէ. «Յայս երկու պատգամս պատճառ առին հերետիկոսքն ասել, եթէ բնութեամբ եղեւ զոյացեալ մեղք. եւ վասն այսպիսի սուտ կարծեացս, եթէ ոչ դան ի դատաստան զործողք մեղացն: Իսկ մեք զայսպիսի մտածութիւնս Մանիքեցոցն՝ որ յայսպիսի խորհուրդս տկարացան, ի բաց մերժեմք եւ ասեմք՝ թէ չէ զոյացեալ ի բնութեան մեղքն. վասն զի որ կամաւ մեղան՝ վարեցան յախտէն ցանկութեան... ոչ ի բնութեան մարդկան են խառնեալ մեղքն, այլ կամք են ծնող նորա, եւ նոյն ինքն կամքն մերժող»: ... Եւ կը հետեւցնէ, թէ որովհետեւ մեղանչեւէն առաջ Աստուած ըսաւ. Աճեցէք եւ բազմացաւրուք եւ լցէք գերկիւր, ուստի մեղք չէ ամուսնութիւնը... եւ թէ Աստուած Աղամի ըսաւ, «յաւուր յորում ուտիցես ի ծառոյն», ոչ թէ զբախտէն պիտի վճռուուի... այլ թէ մահուամբ պիտի մեռնիս. եւ թէպէտ զբախտէն ելաւ, սակայն

աճել է չղադրեցաւ... եւ կը յաւելու, կարծեմ զուգութիւնը եղած էր, թէ եւ չէին մեղանշած (էջ 292):

«Աստուած, ընդէ՞ր մերժեցեր զմեզ ի սպառ» ՀԴ Սաղմոսը մեկնելէն առաջ, կը նկարագրէ դրախտին երանութեան վայելքը եւ մարդուն թաղաւոր եւ իշխան ըլլալը՝ բոլոր անասուններուն. եւ որովհետեւ ծառին պտուղէն չուտելու օրէնքը տուաւ Աստուած նախամարդուն՝ ոչ թէ նախանձելուն, ինչպէս Մանիքեցիք կը բարբառնին, այլ թէ Աստուած իր կատարեալ բնութիւնը յայտնեց՝ պատուէր տալով հոգու մնալ վտանգէն՝ իր պատուիրանին պահպանութեամբ. սակայն որովհետեւ Ադամ Եւայի եւ օձին աշակերտեցաւ, անմահութեան շնորհքէն զրկուեցաւ, որ արարչէն իրեն պարգեւում տուած էր... եւ վախճանելով դրախտէն՝ պանդուխտ եղաւ երկրի վրայ, որ փուշ կը բուսցնէ: Այս է պատճառը՝ որ արգարները ըմբռնելով առաջին մարդուն դուրսը, կը հառաչեն ողբալով փշաբեր երկրի վրայ ուշանալուն, ինչպէս որ կ'ողբայ Դաւիթ (էջ 441):

Մեկնելով ԶԲ Սաղմոսին «Աստուած, ո՞քեզ նմանեցէ՛, մի՛ լռեր եւ մի՛ դադարեր», եւն. համարը, կը յիշէ հերձուածողներու խումբէն՝ Արիոսի եւ Պոզուս Սամոսացիի հետ Արտեմոն եւ Փոտիանոս, Սարգիսոս եւ ուրիշներ, ըսելով թէ ասոնք են բարբարոս հեթանոսները, որ մղուած չար դեւերէն, կը հակառակին Աստուծոյ Եկեղեցւոյն եւ սուրբ ժողովուրդին, եւ կը կրկնեն Սաղմոսին սպառնալիքը. «եկայք սատակեցուք զնոսա յազգաց, եւ մի՛ յիշեցի անունն Իսրայելի» (էջ 502):

Այսքանը բաւական կը համարինք իբր սպացոյց իր ուղղամիտ դիտաւորութեան, եւ մոլորեալներու դէմ գործածած բուն լեզուն՝ ի պաշտպանութիւն Եկեղեցւոյ վարդապետութեան, քանի որ Սաղմոսներու մեկնութեամբ իր ալ նըպատակն էր, նման Ս. Գրքի ուրիշ մեկնիչներու, ժամանակին եւ պարագաներուն համաձայն՝ ի սպաս դնել դիտութիւններն, եւ իրենց խնամքին յանձնուած հաւատացեալներու բարոյականը եւ հաւատքը ապահովել, հաստատելով իրենց խօսքը Եկեղեցւոյ լուսաւոր ջահերուն վկայութիւններով: Դանիէլ Վարդապետ ալ, իբր վանքի մը գլուխ, առանձնական կեանքի նուիրումով իր հպատակներուն կը պարզէ ամէնօրեայ երգումը Սաղմոսներուն խորիմաց իմաստը, ուղելով լուսաւորել անոնց մտքերը ու քաջալերել կըռուելուն՝ ոչ միայն իրենց կիրքերուն դէմ, այլ եւ աղանդաւորներու, եւ նոյն իսկ հալածիչ անհաւատներու դէմ, նման մեր Յովհ. Օձնեցի հայրապետին, որ բնաբան առնելով Յովհաննէս առաքեալին խօսքը, թէ «բազումք են ելեալ յաշխարհ նեւռինք», կ'ըսէր թէ անոնք որոգայթ կը լարեն իրենց տխմար եւ պարզամիտ ժողովուրդին մէջ, պատկերամարտութենէ խաչամարտութեան եւ քրիստոսատեցութեան, եւ անկից անաստուածութեան եւ զիւապաշտութեան հասնելով: Կայ նաեւ ակնարկութիւն քաղաքական աջակցութեան, երբ կը յաւելու՝ թէ կը դաշնակցին «բռնակալաց կըճատելոց, եւ ի հըմտութիւն ամեալ նոցին ստուերագիր առասպելապատում մատենիցն զհամբաւացն իւրեանց խմբաւորութիւն...»:

(Շար. 6)

Հ. ՔԵՐՈՐԷՅ Ա. ԶՐԱՔԵԱՆ

ԵՐԱԽԱՆԵՐՈՒ ՕԾՈՒՄԸ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Հին շրջանին

Եկեղեցական պատմութեան ամենահին աղբիւրներուն մէջ, ուր կը նկարագրուին մկրտութեան առաջին արարողութիւնները, հետաքրքրական է քննել մըկրտութիւնը կանխող ժամանակամիջոցը, որ յատուկ անունով մը կոչուած է «երախայութիւն»: Երախայութեան կարգի երկար արարողութեան վերջաւորութեան կը կատարուէր օծումի արարողութիւնը:

Ընդհանուր Եկեղեցւոյ պատմութեան մէջ, երախայները օծելու առաջին դրաւոր յիշատակութիւնը կը գտնենք Գ. Դարուն, Հիսկոպոլիտոսի քով՝ յաջորդաբար աւելի ստեպ կը գտնենք նման դրաւոր աղբիւրներ, որոնք երկու խումբի կարելի է բաժնել. մաս մը կ'օձեն երախային ճակատը կամ զգայարանքները՝ սատանայէն հրաժարելու արարողութենէն առաջ. ասոր հակառակ, աւելի կ'ընդհանրանայ երկրորդ ձև մը, ուր օծումը կը կատարուի հրաժարումի արարողութենէն ետք, զօրացնելու համար երախային կամքը՝ կեանքի դժուարութիւններուն յաղթելու, եւ լաւագոյն կերպով պատրաստուելու մերձաւոր մկրտութեան մեծ ու հանդիսաւոր պահուն:

Հայոց քով

Արեւելքի եկեղեցիները գրեթէ բոլորն ալ պահած են երախայներու օծումը. արդեօք հայ եկեղեցւոյ մէջ ալ գոյութիւն ունեցած է՝ մկրտելէ առաջ՝ երախայներու օծումը: Այս ուղղութեամբ՝ իբր առաջին աղբիւր կրնանք նկատել Յովհան

Օձնեցիի գրութիւնը, որ խօսելով իր ժամանակի զեղծումներուն վրայ՝ կ'անդրադառնայ նաեւ երախայներու օծումի մասին, պահանջելով որ վերահաստատուի դարաւոր սովորութիւնը, այսինքն՝ երախայներու օծումը, մկրտութենէն առաջ, ինչ որ ժամանակով մոռացութեան մատնուած էր: Սուրբ Հայրապետը կը յիշատակէ թէ կան քահանաներ՝ որոնք Երուսաղէմէն ձէթ կը բերեն կամ ուրիշի մը ձեռքով բերել կու տան եւ «նովին ձիթով օծանեն զմկրտեալն եւ զերախայսն»²: Ապա դանդաղի ձեռով կը շարունակէ. «տեսանեմք առ այսօրիւք եւ զայս եւս զի... եւ ոչ յերախայութեանն նախկին մատուցանեն ձեռնադրութեամբ յօծումը»³. Նախկին բառով Օձնեցի կը հասկըցնէ թէ իրմէ առաջ ալ կար երախայներու օծումը, որ ժամանակի ընթացքին խափանուած էր: Յովհան Օձնեցի, իբր հովիւ ու վերանորոգիչ, կ'ուզէ վերահաստատել ինչ որ ուղիղ է եւ դարերով պահուած է Եկեղեցւոյ ծոցին մէջ. ուստի երբ կը հաստատէ կանոններ, անոնցմէ երկուքը կը վերապահէ այս խնդրին համար. «Պարտ եւ արժան է զմկրտութեան ձէթ քահանային օրհնել մի ըստ միով ընդ մկրտելն ըստ բաւականի ժամու պիտոյից, եւ նոյն ժամայն առ մկրտեալն մերձեցուցանելով՝ զօրհնեալն ըստ պառել, եւ մի՛ իշխել զմիանգամ օրհնեալն

1. MAERTENS TH. Histoire et pastorale du rituel du catéchuménat et du baptême, Bruges, 1962, pp. 96-7.
2. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ԱԻԶՆԵՑԻՈՅ, Մատենագրութիւնք, Վեների, 1953, էջ 16:
3. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՕՁՆԵՑԻ, անդ, էջ 17: